ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«01» ----------09----------2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

I գ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Վարդանյան Նունե Ռոբերտի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

I դասարանում սովորում է 25 աշակերտ՝ 15տղա, 10աղջիկ: Երեխաները կարգապահ են և ընկերասեր: Գիտակցում են դպրոցի , գիտելիքի, սովորելու դերն ու նշանակությունը: Աշակերտները գիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները: Բացակայությունները շատ քիչ են, հաճախում են դպրոց պատրաստված, հանձնարարված առաջադրանքները կատարած:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:
Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, նրա հերոսական էջերին, հայոց եկեղեցիների պատմությանը: Այցելել մշակույթի կենտրոններ , զրույց անցկացնել քրիստոնեության մասին, լսել հոգևոր երաժշտություն:

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝*

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: Այցելություններ թանգարաններ, պատկերասրահ, տեսարժան վայրեր,համերգասրահներ: Ընթերցել հեքիաթներ, կազմակերպել քննարկումներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Կազմակերպել հայրենասիրական արշավներ: Ճանաչել և իմանալ Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների՝դրոշի, զինանշանի և օրհներգի մասին:

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Կազմակերպել աշակերտների ֆիզիկական զարգացմանը և առողջության պահպանմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, էքսկուրսիաներ, էստաֆետային խաղեր, մշակել ճիշտ կեցվածք: Խոսել անձնական հիգենայի, վնասակար սովորությունների և դրանց հետևանքների մասին:

Աշխատանքային դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: Դաստիարակել սեր և հոգատարություն աշխատանքի , աշխատանքային գործիքների նկատմամբ: Կազմակերպել շաբաթօրյակներ, զրուցել շրջապատի մաքրության կարևորության մասին:

Բնապահպանական դաստիարակություն *Խնդիրները՝*

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում : Զրույցներ շրջապատի , շրջակա միջավայրի մաքրության պահպանման մասին: Զրույցներ <<Մարդը բնության բարեկամն է>>, <<Պահպանենք և մաքուր պահենք մեր շրջապատը >>, <<Հոգատար վերաբերմունք բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ>> թեմաներով:

Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն: Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ, իրազեկել աշակերտների կարգապահության առաջադիմության մասին: Ծնողներին ներգրավել դասարանական աշխատանքների մեջ:*

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Չորեքշաբթի	5-րդ		

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	<<Ես աշակերտ եմ>>։ <<Սովորողի իրավունքներն ու պարտականությունները>>- քննարկում։	06.09.2023	Կատարված է
II	Զրույց՝<<Իմ վարքը դպրոցում և շրջապատում>>։	13.09.2023	Կատարված է
III	Զրույց՝<<Սեպտեմբերի 21-ը անկախության օր>>։	20.09.2023	Կատարված է
IV	Զրույց՝ <<Մեր ընտանիքը>>։ Հարգենք մեծերին։	27.09.2023	Կատարված է
V	<<Տոնդ շնորհավոր, ուսուցիչ իմ թանկագին>> բացիկի պատրաստում։	04.10.2023	Կատարված է
VI	Զրուցել Թարգմանչաց տոնի խորհրդի, ուսուցչի դերի մասին։	11.10.2023	Կատարված է
VII	Ճանապարհային երթևեկության կանոններ <<Ո՞վ է հետիոտնը>>։	01.11.2023	Կատարված է
VIII	Ճանապարհային երթևեկության կանոններ <<Մեր փողոցներում>>։	08.11.2023	Կատարված է
IX	<<Համագործակցություն>> <<Մեր բակի պատմությունը>>։	15.11.2023	Կատարված է
X	<<Արդյունավետ հաղորդակցում>> <<Քույրոյի ծննդյան օրը>>։	22.11.2023	Կատարված է
XI	Զրույց՝ Ինչպես օգնել ձմեռող թռչուններին։	29.11.2023	Կատարված է
XII	Զրույց՝<<Ինչպե՛ս վարվել բնական աղետների ժամանակ>>, <<Երկրաշարժից զոհվածների հիշատակի օր>>։	06.12.2023	Կատարված է
XIII	<<Կոնֆլիկտների հաղթահարում>> << Արի հաշտվենք>>։	13.12.2023	Կատարված է
XIV	Ձմռան մուտքը դասարան։	20.12.2023	Կատարված է
XV			
XVI			
XVII			
XVIII			
XIX			
XX			
XXI			
XXII			
XXIII			
XXIV			

XXV			
XXVI			
XXVII			
XXVIII			
XXIX			
XXX			
XXXI			
XXXII			
XXXIII			
XXXIV			